Մի ցամաքամասի մայրաքաղաքը, ինչպես Նյույորքը, ունի մի գեղեցիկ նավահանգիստ։ Նավահանգիստը ունի մի քանի կղզիներ։ Նավերը մտնում են նավահանգիստ։ Նավերը մտնում են նավահանգիստ։ Նավերը մտնում են նավահանգիստ։

Մ. ՕՀԱՆՅԱՆ (նկարից)

ԲԵՐԿՐԱԼԻՑ ՕՐԵՐ

Դեր սրտերի համար չկան ավելի շքնաղ, ավելի բերկրալից, բովանդակալից ու նշանակալից օրեր, քան նոյեմբերյան ու դեկտեմբերյան օրերը։

Քսան ինը տարի առաջ, նոյեմբերյան և նրան նախորդող օրերին, ռուսական լայնածավալ օվկիանոսը մեծ երկունքով էր բռնված՝ հղի գալիքի լուսաշող հեռանկարներով. ալեկոծվում, փոթորկվում էր նա մարդկության պատմության մեջ նախընթացը չունեցող մեծ բախումներից։

Ահեղ ու դաժան գոտեմարտեր էին տեղի ունենում հին ու նոր աշխարհի միջև։

Եվ այդ գոտեմարտերի թեժ բոցերի միջից, նոյեմբերյան օրերին էր, որ ծնվեց առնական նոր աշխարհը։

Տեղի ունեցավ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան։

Ռուսական անծայրածիր երկրի վրա հրապարտորեն ծածանվել սկսեց ազատության ալ կարմիր դրոշը։

Հոկտեմբերյան ռևոլյուցիան վեր պարզեց հանուր մարդկության նոր կյանքի ուղին լուսավորող մշտավառ ջահը։

Մարդկության պատմության մեջ Նոյեմբերը սկիզբ հանդիսացավ մի նոր, աննախընթաց դարաշրջանի. նորագույն պատմության ոսկետառ էջերը ակամեցին Նոյեմբերով։

Խորտակվեց Եվրոպայի ժանդարմը՝ ցարական կառավարությունը։

Հիմնահատակ ոչնչացվեցին ցարական-բանտափրական և վերելքման ու շահագործման անարդ կարգերը։

Ընդմիշտ կործանվեց ժողովուրդների բանտ ցարական Ռուսաստանը և նրա փլատակների վրա հաղթականորեն վեր խոյացավ Հոկտեմբերի ծնունդ՝ աշխարհի ամենադեմոկրատական սովետական պետությունը, որը կոփեց ժողովրդների եղբայրության, համերաշխ գործակցության անխախտ ու անսասան դաշինքը։

Հոկտեմբերյան ռևոլյուցիան ազատություն ու երջանկություն բերեց Ռուսաստանի բոլոր ժողովրդների համար։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի կենսաշող ճառագայթները հեռավոր հյուսիսից տարածվելով հասան մինչև Նոյան տապանի հանգրվան բիբլիական Արարատը ու ցրեցին նրա շուրջն իշխող մղձավանջային խավարը։ Այդ կենսաբեր ճառագայթների տակ հայ բազմաչարչար ժողովուրդը, որ մահվան անդունդի եզրին էր կանգնեցվել, հնարավորություն ստացավ իր խորը վերքերը բուժելու, իր երջանիկ ու նոր կյանքը կռելու։

Հայ ժողովրդի նորագույն պատմության էջերը փառավորվեցին դարձյալ նոյեմբերյան անզուգական օրերով. Նոյեմբերը սկիզբ հանդիսացավ նաև հայ ժողովրդի վերածնման. նոյեմբերյան օրերին էր, որ սկիզբ դրվեց հայ ժողովրդի նոր պետականությանը, որը նա կորցրել էր վեց դար առաջ. այսպիսով Նոյեմբերը հայ ժողովրդի համար կրկնակի թանգ է։

26 տարի առաջ, Նոյեմբերին, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, հայ ժողովուրդը փշրեց նախճիրների, արցունքի հովիտների տխրահռչակ «հերոսներ» դաշնակ-մաուզերիստների զազրելի, անարդ լուծը. դաշնակների, որոնք հայ ժողովրդին մահվան դուռն էին հասցրել։

***

Բերկրալից օրեր ապրեց այս տարի Նոյեմբերին հայ ժողովուրդը. նա մեծ տպավորությամբ նշեց այդ երկու պատմական խոշոր տարեթվերը — Հոկտեմբերյան ռևոլյուցիայի 29-րդ և Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու 26-րդ տարեդարձները։

Հայրենական մեծ պատերազմից հետո երկրորդ անգամն է, որ սովետական ժողո-

վուրդը նշում է այդ փառապանծ տարեդարձները խաղաղության պայմաններում, խաղաղություն, որի հաստատմանը իր բաժինը բերեց նաև հայ ազատասեր ու մարտունակ ժողովուրդը։ Եվ այսօր հայ ժողովուրդը վայելում է այդ խաղաղության պտուղները։

Մեծ Միության եղբայրական բոլոր ժողովուրդների հետ միասին նա ձեռք է զարկել ստեղծագործ ու շինարար աշխատանքի։

Շնորհիվ Հոկտեմբերյան մեծ ռևոլուցիայի Հայաստանը ցարական դաղութից դարձել է սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքի հավասարազոր անդամը։

26 տարվա ընթացքում, վայելելով եղբայրական ժողովուրդների աջակցությունը, նա աճել, զարգացել, հասակ է քաշել, դառնալով դերհզոր Սովետական Միության առաջավոր ռեսպուբլիկաներից մեկը. ծաղկել ու բարգավաճել են նրա արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, գիտությունը, մշակույթը, գրականությունն ու արվեստը։

Անցյալ 26 տարվա ընթացքում կառուցվել են հարյուրավոր խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, հիմք են դրվել արդյունաբերական նոր ճյուղերի։ Ջրանջ Սևանի հիդրոէներգիայի օգտագործմամբ Հայաստանը վերածվել է էլեկտրիֆիկացված երկրի. Ջանգվի հիդրոկայանները, Հայաստանի ժողովրդատնտեսության այդ բաբախուն սրտերը, օրեցոր նոր թափ են հաղորդում մեր երկրի տնտեսության զարգացմանն ու ծավալմանը։ Անճանաչելիորեն փոխվել է գյուղատնտեսության դեմքը. Հայաստանը ծածկվել է ջրանցքների խիտ ցանցով, բազմապատկվել են ցանքատարածությունները, արմատապես վերափոխվել է հողի մշակման տեխնիկան՝ մեծ չափերով բարձրացնելով նրա բերքատվությունը, ընդարձակվել է տեխնիկական կուլտուրաների մշակությունը, զարգացման նոր ու բարձր աստիճանի վրա է դրվել խաղողագործությունը, բարեկարգ ու վայելուչ տեսք են ընդունել էլեկտրալույսերով ողողված քաղաքներն ու գյուղերը։ 26 տարում ռեսպուբլիկան վերածվել է համատարած դրագիտության երկրի, ծածկվել տարրական, միջնակարգ ու բարձրագույն դպրոցների խիտ ցանցով. հիմնվել է Գիտությունների Ակադեմիան՝ իր գիտա-հետազոտական բազմաթիվ ինստիտուտներով հանդերձ. իրենց նոր ու լուսաշող Ոսկեդարն են ապրում հայ արվեստը, հայ գրականությունը։

Հայաստանի տնտեսական ու կուլտուրական բուռն վերելքը և անհախընթաց աճը, 26 փառապանծ տարիներում, նախադրյալներ ստեղծեցին նրա համար իր դռները լայն բաց անելու ատամնդական հայ ժողովրդի առաջ։ Ուղիղ մի տարի առաջ, դեկտեմբերի 2-ին հրապարակվեց Սովետական կառավարության, հայ ժողովրդի համար պատմական մեծ նշանակություն ունեցող, որոշումը՝ արտասահմանյան հայերի հայրենադարձության մասին։ Եվ եթե նոյեմբերը հանդիսանում է հայ ժողովրդի ազգային վերածնման, նրա դարավոր երազների ու իղձերի իրականացման ամիսը, ապա դեկտեմբերը հանդիսանում է հայ ժողովրդի ազգահավաքման, հայրենի օջախի շուրջը համախմբվելու կոչի ամիսը։ 1945 թվի դեկտեմբերով հայ ժողովրդի պատմության մեջ մի նոր ու փառավոր էջ բացվեց։ Սփյուռքի ողջ հայրենաբաղձ հայությունը աննկարագրելի խանդավառությամբ ու ցնծությամբ ընդունեց հայրենիք վերադառնալու հրավերը։

Դեռ մի տարի չանցած, արդեն կենսագործված ենք տեսնում պատմական այդ որոշումը. արդեն հայրենիքի հարազատ գիրկն են դարձել մի քանի տասնյակ հազար պանդուխտ ու վտարանդի հայեր։ Բայց դրանք դեռ առաջին ծիծեռնակներն են. դրանց պիտի հետևեն մի քանի հարյուր հազար հայրենադարձ հայեր, որոնք այսօր հայրենիքի կարոտը սրտներում ակնդետ սպասում են նվիրական հայրենի օջախի շուրջը բոլորվելու իրենց հերթին, որպեսզի հարազատ հողի վրա իրենց երջանիկ կյանքը ու վառվռուն ապագան կերտեն։

Հոկտեմբերյան Մեծ ռևոլուցիայի 29-րդ և Հայաստանում սովետական կարգեր հաստատելու 26-րդ տարեդարձները նշանավորվեցին նաև նրանով, որ առաջին անգամ հայրենի հողի վրա այդ տոներին մասնակցեց արտասահմանից հայրենի հարկի տակ վերադարձած 51 հազար հայությունը։ Օտար հորիզոնների տակ երկար տարիներ դեգերած հայ ժողովրդի կենսունակ զավակները մեծ ոգևորությամբ ու ցնծությամբ մասնակցեցին այդ տոներին։ Համաժողովրդական ցնծության այդ օրերին հուզիչ պահեր ապրեցին նրանցից շատերը։ Հոկտեմբերյան ռևոլուցիայի 29-րդ տարեդարձի օրը մայրաքաղաքի հարյուր հազարավոր աշխատավորների հետ միասին Լենինի հրապարակով՝ վառավարական տրիբունայի առջևից խումբ-խումբ անցան արտասահմանից Սովետական Հայաստան ներդաղթած բազմահազար հայրենադարձներ, ար-

ժանանալով հանդիսատեսների բուռն ծափահարություններին։ Նրանք, սովետական այդ նոր քաղաքացիները, ամենուրեք չեն մոռանում երախտագիտության ջերմ խոսքեր ուղղել Նրան, որին երախտապարտ են տարագրությունից ազատագրվելու համար. կառավարական տրիբունայի առջևից անցնելուց, երջանկության ժպիտը հրճվալից դեմքերին, նրանք բացականչում էին.

— Կեցցե՞ մեր ազատարար Հայր Ստալինը։ Փառք հայ ժողովրդի մեծ բարեկամ ու մեր ազատարար Մեծ Ստալինին։

Իրականացել են նրանց երկար տարիների երազները ու իղձերը. այժմ նրանք իրենց հայրենիքումն են, շրջապատված հոգատար հարազատներով։

Դամասկոսից եկած մի ծերունի իր կնոջ ու աղջկա հետ կանգնած էր կառավարական տրիբունայի ձախ թևում ու դիտում էր հրապարակով հոսող մարդկային հեղեղը. ծերունու դեմքը ցոլված էր ուրախության անզուսպ արցունքներով. նա դառնալով իրեն շրջապատողներին՝ հուզված ասում էր.

— Անհո՞ւն է իմ երջանկությունը, դուք չեք կրնար տակավին հասկնալ իմ ապրումները. ես շատ երկրներ թափառած եմ ու շատ ալ շքերթներ տեսած, բայց ասիկա ուրիշ է, ասիկա մե՛րն է, մե՛րը, ու հարազատ...

Հայ ժողովրդի ազատագրական ու տարագիր հատվածի հայրենադարձության սկիզբը դրված է արդեն։ Մեր ժողովրդի նորագույն պատմության տարեգրության այս նշանակալից ու երջանիկ օրերին հայ ժողովուրդը ցնծությամբ ու բերկրանքով է ողջ դնում Նոր տարվա շեմքին։





Երևան, հրավառություն Շահումյան հրապարակում: